ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

N ԿՄՋՀ-ԳՀԽԾՁԲ-21/16 ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ջրվեժ «29» հունիսի 2021թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Թադևոսյան,
Հանձնաժողովի անդամներ՝ Ս.Հովհաննիսյան, Հ.Գրիգորյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Պետրոսյան

Պատվիրատուն՝ Ջրվեժի համայնքապետարանը, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ Մելքոնյան 76 հասցեում, ստորև ներկայացնում է «ԿՄՋՀ-ԳՀԽԾՁԲ-21/16» ծածկագրով Ջրվեժի համայնքի Ձորաղբյուր գյուղի մանկապարտեզի ջրահեռացման համակարգի կապիտալ վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման մասին համառոտ տեղեկատվություն:

N ԿՄՋՀ-ԳՀԽԾՁԲ-21/16 ծածկագրով գնանշման հարցման հայտերի բացման և գնահատման մասին

1. Ընդունել ի գիտություն, որ գնանշման հարցման հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումը	Գտնվելուվայրը,հեռախոսահամարը, էլ.փոստ
1	«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ	Արարատի մարզ, գ.Ոսկան, Թեիլերյան 14 043 60 00 90, gritig@inbox.ru
2	«Վահրամ Կնյազյան» Ա/Ձ	Շիրակի մարզ, քաղաք Արթիկ, Բաղրամյան 1 բն.2 096 10 10 20, knyazjanvvs@mail.ru
3	«Թերմոշինթել» ՍՊԸ	Կոտայքի մարզ, ք.Հրազդան, Վանատուր-327 094 00 10 44, termoshintel@gmail.ru

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Ծրարների կազմման և ներկայացման համապատասխանությունը.
Համապատասխանում են՝ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի, «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի և «Թերմոշինթել» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3.Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են .

Հ/Հ	Մասնակիցների անվանումը	Առաջարկվածգինը (ՀՀդրամով)			Նախահաշվային արժեք
		Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը	
1	«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ	110 000	0	110 000	112 000
2	«Վահրամ Կնյազյան» Ա/Ձ	90 000	0	90 000	
3	«Թերմոշինթել» ՍՊԸ	80 000	0	80 000	

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Գնային պայմանը գնահատվել է հետևյալ կարգով /համաձայն հրավերով սահմանված բանաձև/

Հ/Հ	Մասնակիցների անվանումը	Գնային պայմանի գնահատականը
1	«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ	21.8
2	«Վահրամ Կնյազյան» Ա/Ձ	26.7
3	«Թերմոշինթել» ՍՊԸ	30

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5.Հրավերով սահմանված ոչ գնային պայմաններ.

-«Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը հավաստող փաստաթղթերը ամբողջությամբ ներկայացրել են՝ «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ն և «Թերմոշինթել» ՍՊԸ-ն:

-«Մասնագիտական փորձառություն» չափանիշը հավաստող փաստաթղթերը ամբողջությամբ չեն ներկայացրել «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ն, «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն և «Թերմոշինթել» ՍՊԸ-ն:

- «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը հավաստող փաստաթղթերը մասնակի չի ներկայացրել «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն, մասնավորապես՝ ներգրավված մասնագետի հաստատած գրավոր համաձայնությունը՝ իրականացվելիք աշխատանքներում վերջինիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետի անձնագրի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն կարգի 41-րդ կետի համաձայն էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակիցներին վերը նշված անհամապատասխանությունների մասին՝ առաջարկելով մինչև 2021 թվականի հունիսի 30-ի ժամը 18:00-ն ներկայացնել արձանագրված անհամապատասխանությունների շտկումներ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7.Նիստը ընդհատվում է մինչև 2021 թվականի հուլիսի 1-ի ժամը 11:30-ն՝ շտկված փաստաթղթերի հիման վրա հայտերի գնահատման նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Թադևոսյան

Անդամներ՝ Ս.Հովհաննիսյան

Հ.Գրիգորյան

Քարտուղար՝ Ա.Պետրոսյան